ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք. Սևան, Նաիրյան 6/1 հեռ. (0261) 2-02-33

06.05.2013թ.

ԴԴ-30.2-2461/13

հայցվոր – <u>Արմեն Խաչիկի Բաբիկյանին</u>

/հասցե՝ ք. Գավառ, Իսահակյան փող., տուն 14/

պատասխանող – <u>Գեղարքունիքի մարզպետարանին</u>

/հասցե՝ ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36/

Կից Ձեզ է ուղարկվում ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2013թ. թիվ ԳԴ/0158/02/11 վճիռը 3 /երեք/ թերթից:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

13 05 2013թ.

Մուտք թիվ 2842-13

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

06.05.2013թ. ք. Սևան

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով.

նախագահությամբ՝ դատավոր Ա.Գաբրիելյանի,
քարտուղարությամբ՝ Լ.Բաղալյանի,

մասնակցությամբ՝
հայցվոր Ա.Բաբիկյանի,

դռնբաց դատական նիստում 2013 թվականի ապրիլի 22-ին, քննության առնելով քաղաքացիական գործն՝ ըստ հայցի Արմեն Խաչիկի Բաբիկյանի /անձնագիր՝ ԱՀ 0699354/ ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ 20.05.2011թ. թիվ 42 ազատման հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, վերջնահաշվարկ կատարելու, ամենամյա արձակուրդի վճարման և հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար վճարելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

I

Գործի դատավարական նախապատմությունը

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2011թ. վճռով Արմեն Խաչիկի Բաբիկյանի հայցը բավարարվել է, իսկ քաղաքացիական գործի վարույթը վերջնահաշվարկ կատարելու, ամենամյա արձակուրդի վճարման պահանջների մասով, կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.10.2011թ. որոշմամբ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2011թ. թիվ ԳԴ/0158/02/11 վճիռը մասնակիորեն՝ հայցը բավարարելու և պատասխանողից դատական ծախսերը բռնագանձելու մասով բեկանվել է և գործն այդ մասով ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

Հայցվորի ներկայացուցչի կողմից հայցապահանջը լրացվել է հետևյալ բովանդակությամբ. «Անվավեր ճանաչել 10.03.2011թ. կայացված՝ իր վստահորդին կարգապահական տույժի ենթարկելու մասին գործատուի ներքին անհատական ակտը»:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2012թ. վճռով քաղաքացիական գործի վարույթն՝ ըստ հայցի Արմեն Խաչիկի Բաբիկյանի ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ 10.03.2011թ. կայացված կարգապահական տույժի ենթարկելու մասին գործատուի ներքին անհատական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, կարճվել է, իսկ հայցապահանջները մնացած մասով՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.10.2012թ. որոշմամբ Արմեն Խաչիկի Բաբիկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Բեկանվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի

ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2012թ. թիվ ԳԴ/0158/02/11 վճիռը և գործն ուղարկել է նոր քննության:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.12.2012 թվականի թիվ ԳԴ/0158/02/11 որոշմամբ Արմեն Խաչիկի Բաբիկյանի հայցադիմումն ընդդեմ Գեղարքունիքի մարզպետարանի՝ 20.05.2011թ. թիվ 42 ազատման հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, վերջնահաշվարկ կատարելու, ամենամյա արձակուրդի վճարման և հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար վճարելու պահանջների մասին, ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ 2012 թվականի դեկտեմբերի 24-ին ժամը 12^{00}-ին:

Նույն դատարանի 20.02.2013թ. որոշմամբ սույն գործով նշանակվել է դատաքննություն 2013թ. փետրվարի 27-ին ժամը 11^{00}-ին:

<u>Հայցադիմումի հիմքերը, հայցվորի փաստարկները և պահանջը</u>

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնել է, որ 25.04.1996 թվականին ընդունվել է աշխատանքի Գեղարքունիքի մարզպետարանում՝ որպես ավագ տեսուչ: 13.09.1996 թվականին տեղի է ունեցել հաստիքի փոփոխություն, ինչի արդյունքում նշանակվել է մարզպետին սպասարկող քարտուղար, իսկ 18.12.1996 թվականին՝ նշանակվել գլխավոր մասնագետ-խորհրդական: 09.06.2006 թվականին իր հետ կնքվել է թիվ 18 աշխատանքային պայմանագիրը, որտեղ սահմանված են աշխատանքային ժամերը, ընդմիջման ժամերը և այլ աշխատանքների կազմակերպման պայմանները: Ամսական աշխատավարձի գումարը կազմում է 84500 ՀՀ դրամ: 20.05.2011 թվականին թիվ 42 կարգադրությամբ ազատվել է աշխատանքից, ինչի համար հիմք են ծառայել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետը, 121-րդ հոդվածի 1-ին կետը և 123-րդ հոդվածը: Թեև 20.05.2011 թվականին տրված թիվ 42 կարգադրությամբ հանձնարարվել է իր հետ կատարել օրենքով սահմանված կարգով վերջնահաշվարկ, այնուամենայնիվ այն մինչ օրս չի կատարվել:

Չկատարված վերջնահաշվարկի կապակցությամբ 02.06.2011 թվականին դիմում է ներկայացրել Գեղարքունիքի մարզպետ Ն.Պողոսյանին՝ միաժամանակ նշելով վերջնահաշվարկի մեջ ներառել այն գումարը, որը մարզպետի անձնական ցուցումով ծախսել է իր հաշվին աշխատասենյակը վերանորոգելու համար, այն է՝ 75000 ՀՀ դրամ: Գործատուի կողմից նման պահանջ ներկայացնելն՝ աշխատասենյակի վերանորոգումը պատճառել է իրեն նյութական վնաս, ինչը սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածի 6-րդ կետով (վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ և 234-րդ հոդվածի 3-րդ կետով թույլ են տրվել աշխատողի կամ այլ անձանց գույքային իրավունքների այլ խախտումներ):

Այդ կապակցությամբ 02.06.2011 թվականին ներկայացրել է դիմում Գեղարքունիքի մարզպետին, որի կապակցությամբ մինչ օրս չի ստացել որևէ պատասխան: Գեղարքունիքի մարզպետի կարգադրությունների հանդեպ կարգապահական տույժեր կիրառելու կապակցությամբ ներկայացրել է համապատասխան բացատրություն: Առաջին անգամ իր բացակայությունը կապված է եղել հոր ճնշումն իջեցնող դեղորայք տուն տանելու հետ, որը տեղի է ունեցել 14:35-ից մինչև 14:50 ժամանակահատվածում: Երկրորդ իր բացակայությունը արձանագրվել է անտեղի, քանի որ ինքը գտնվել է աշխատանքային վայրում, այլ աշխատակցի սենյակում: Բավական իրավաբանական գիտելիքներ չունենալու պատճառով՝ դատական կարգով չի բողոքարկել իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժ կիրառելու մասին Գեղարքունիքի մարզպետի կարգադրությունները:

Գործատուի կողմից չի վճարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով նախատեսված ամենամյա արձակուրդի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ, 265-րդ, 130-րդ, 158-րդ, 232-րդ, 234-րդ հոդվածներով՝ խնդրել է 20.05.2011թ. թիվ 42 ազատման հրամանն անվավեր ճանաչել, վերականգնել նախկին աշխատանքում, կատարել վերջնահաշվարկ, պարտավորեցնել վճարել իրեն հասանելիք ամենամյա արձակուրդի գումարը, ինչպես նաև հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի գումարը՝ մինչև վճարումը:

Հայցվորի ներկայացուցչի կողմից հայցապահանջը լրացվել է, որով խնդրել է նաև անվավեր ճանաչել 10.03.2011թ. կայացված՝ իր վստահորդին կարգապահական տույժի ենթարկելու մասին գործատուի ներքին անհատական ակտը:

Հայցվորը 22.04.2013 թվականին հայցից հրաժարվելու մասին դիմում է ներկայացրել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան և խնդրել է կարճել քաղաքացիական գործի վարույթը:

II

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

1. Հայցվոր Արմեն Խաչիկի Բաբիկյանը 22.04.2013 թվականին (դատաքննության փուլում) հայցից հրաժարվելու մասին դիմում է ներկայացրել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանի կողմից հաստատված հանգամանքները, իրավական վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրահանգումը

Դատարանը, լսելով հայցվորին, ուսումնասիրելով հայցադիմումը և գործով ձեռք բերված ապացույցները, գնահատելով դրանք և գործի մյուս տվյալները, եկավ այն համոզման, որ գործի վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Տվյալ դեպքում հայցվոր Արմեն Խաչիկի Բաբիկյանը 22.04.2013 թվականին (դատաքննության փուլում) ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել դիմում՝ հայցից հրաժարվելու մասին, հետևաբար, քաղաքացիական գործի վարույթը վերոհիշյալ իրավանորմի դրույթների համաձայն ենթակա է կարճման:

Դատարանը, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով, 109-րդ հոդվածի 6-րդ մասով, 110-րդ հոդվածով, 130-132-րդ հոդվածներով,

Վ Ճ Ռ Ե Ց

Քաղաքացիական գործի վարույթն՝ ըստ հայցի Արմեն Խաչիկի Բաբիկյանի ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ 20.05.2011թ. թիվ 42 ազատման հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, վերջնահաշվարկ կատարելու, ամենամյա արձակուրդի գումարը վճարելու, հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար վճարելու և 10.03.2011թ. կայացված կարգապահական տույժի ենթարկելու մասին գործատուի ներքին անհատական ակտն անվավեր ճանաչելու պահանջների մասին, կարճել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ծանոթություն. Վճիռը սահմանված ժամկետում չի բողոքարկվել և մտել է օրինական ուժ:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ